1· Դաշնագիրը կազմող Պետութիւնները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնները պարտաւորւում են իրանց մէջ գոյութիւն ունեցող, այլ և ծագելիք հնարաւոր բոլոր վէճերը լուծել համաձայնութեամբ, իսկ եթէ դա չկայանայ՝ պարտադիր իրաւարքի միջոցով:

2· Վաւերացուած սոյն դաշնագրի փոխանակութիւնը կատարւելու է Թիֆլիզում երկու շաբաթւայ ընթացքում:

3· Ներկայ դաշնագիրը կազմւում է երկու օրինակ:

Վրաստանի Հանրապետութեան Ներքին Գործերի և Զօրական Նախարար Ն· ՌԱՄԻՇՎԻԼԻ

Հիմնադիր Ժողովի Փոխ-նախագահ Ս· ՄԴԻՎԱՆԻ

Ստեփան Գրիգորեան ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Հայաստանի Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան ԽԱՉԱՏՐԵԱՆ

Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտը 1919թ· նոյեմբեր 11-ի իր նիստում, լսելով և քննութեան առնելով ներկայ դաշնագիրը՝ միաձայն որոշեց — «Հաստատել սոյն դաշնագիրը, որ կնքել են Թիֆլիզում 1919 թ· նոյեմբեր 3-ին Վրաստանի և Հայաստանի Հանրապետութիւնների Կառավարութիւնները՝ լուծելու Վրաստանի և Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող, այլ և հնարաւոր ծագելիք բոլոր վէճերը համաձայնութեամբ, իսկ եթէ այդպիսին չկայանայ — պարտադիր իրաւարքի միջոցով»:

(Հաստատուած է 1919թ· նոյեմբ· 11-ին)

Պետական լեզուի մասին· — 1) Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն հայերէնն է և պարտադիր զօրքի ու բոլոր պետական և հասարակական հաստատութիւնների մէջ: Այլ լեզուների գործածութիւնը պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ սահմանւում է յատուկ օրէնքով:

2) Պետական և հասարակական հաստատութիւնները պարտաւոր են վեց ամսւայ ընթացքում հայերէնը դարձնել պետական գործավարութեան պաշտօնական լեզու:

(Հաստատուած է 1919թ· դեկտ· 26-ին)

Զինուորների ռոճիկի մասին·—Զինուորների ռոճիկը սոյն թւի հոկտեմբ· 1-ից սահմանել ամսական ներկայ օրէնքին կցած տախտակի համաձայն: